evoca

Cashback (Քեշբեք)-ի տրամադրման պայմաններ և դրույթներ

1. **Հիմնական հասկացություններ**

Ակցիա – «Էվոկաբանկ» ԲԲԸ- ի կողմից իրականացվող ակցիա:

Բանկ – «Էվոկաբանկ» ԲԲԸ:

Քարտապան – «Էվոկաբանկ» ԲԲԸ-ում Mastercard վճարային քարտի ֆիզիկական անձ հանդիսացող քարտապան:

Վճարային համակարգ – Mastercard:

Քարտ – Բանկի կողմից թողարկված Mastercard վճարային համակարգի քարտ, այդ թվում՝ Evoca Travel, MC Digital, MC Gold, MC Standard, բացառությամբ՝ MC Digital Gift քարտի:

Cashback (Քեշբեք) – Գումարի որոշակի տոկոսի վերադարձ գնում կատարելուց հետո:

Գործընկեր – Կազմակերպություն, որը համագործակցում է ակցիայի շրջանակներում:

Վաճառքի կետ – Գործընկերոջ սպասարկման կետեր, որտեղ Քարտով գործարք կատարելիս ձևավորվում է **Cashback (Քեշբեք):**

Կանոններ – Ակցիային մասնակցելու պայմաններն ու սահմանափակումները:

Chargeback – Վճարման վերադարձ, երբ Քարտապանը վիճարկում է գործարքը և Բանկը հետ է վերադարձնում գումարը:

Refund, reversal – Գումարի վերադարձ Քարտապանին՝ անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում: Refund-ը իրականացվում է վաճառողի կողմից ապրանքը վերադարձնելուց հետո: Reversal-ի դեպքում գործարքը անմիջապես չեղարկվում է և գումարը չի գանձվում:

Հաշվանցված գործարք – հաստատված գործարք, որն արդեն հաշվառված է բանկային կամ վճարային համակարգում:

2. **Ընդհանուր դրույթներ**

- Ակցիան իրականացվում է Բանկի բոլոր Mastercard վճարային քարտերով՝ բացառությամբ Mastercard Digital Gift (թվային նվեր) քարտերի:
- Ակցիայի շրջանակներում Քարտապանները, կատարելով վճարումներ գործընկեր կազմակերպություններում, ստանում են 20 տոկոս **Cashback (Քեշբեք)**:
- Յուրաքանչյուր քարտին տրամադրվում է առավելագույնը 10,000 ՀՀ դրամ **Cashback (Քեշբեք)**:
- Ակցիան գործում է 15.08.2025թ.-ից մինչև 15.09.2025թ.-ը:

3. Ակցիայի պայմաններ

- Ակցիայի շրջանակներում քարտապանները **Cashback (Քեշբեք)** ստանալու համար պետք է վճարումներ կատարեն գործընկեր կազմակերպություններում:
- Գործընկեր կազմակերպություններն են՝

- AMRAK
- MINISO
- PENBOX
- ZANGAK
- EPIGRAPH
- BOOKINIST

- Վճարումը պետք է կատարվի Բանկի կողմից թողարկված քարտով:
- Ակցիային մասնակցում են ինչպես գործող, այնպես էլ նոր բացված Mastercard վճարային քարտերը:
- Կատարված գործարքների մասով իրականացված հետ գանձումների և հետ վերադարձների դեպքում **Cashback (Քեշբեք)** չի տրամադրվում:
- Քարտապանների կողմից ակցիային մասնակցությունը կատարվում է ավտոմատ՝ առանց լրացուցիչ համաձայնության:
- Փաստացի հաշվարկված **Cashback**-ը **(Քեշբեք)** քարտապանին փոխանցվում է ակցիայի ավարտից հետո հաջորդող 10 աշխատանքային օրերի

ընթացքում: Քարտապանին փոխանցվող **Cashback-ի (Քեշբեք)** գումարը ենթակա է 20% եկամտահարկի՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

- **Cashback (Քեշբեք)-ը** հաշվարկվում է Քարտապանի կողմից ակցիայի ընթացքում գործընկեր կազմակերպություններում կատարված բոլոր հաշվանցված գործարքների հանրագումարից:
- **Cashback (Քեշբեք)** տրամադրվում է այն վճարային քարտերով կատարված գործարքների մասով, որոնք **Cashback (Քեշբեք)** տրամադրելու պահին փակված չեն և ունեն գործող կարգավիճակ:
- Քարտի գործողության ավարտի դեպքում, եթե քարտը չի վերաթողարկվում, **Cashback (Քեշբեք)** չի տրամադրվում:
- **Cashback (Քեշբեք)** տրամադրվում է հաշվանցված գործարքների դեպքում:
- **Refund, reversal, Chargeback** կատարված գործարքների դեպքում **Cashback (Քեշբեք)** չի տրամադրվում:
- Սույն պայմաններն ու դրույթները ցանկացած ժամանակ Բանկի կողմից կարող են միակողմանի փոփոխվել: Փոփոխությունները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում և ենթակա են կիրառման հրապարակման պահից: